ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼ-24/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	մակնիշը	տեխնիկական բնութագիրը
5	Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ	Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հուշանվերը իրենից ներկայացնում է 5մմ /±0,5մմ/ հաստությամբ ամրացող միակողմ պատկերով սկավառակ: Սկավառակը պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Սկավառակի հիմնական գույնը ոսկեգույնն է: Սկավառակը արտաքինից եզերված է 100մմ /±0,5մմ/ լայնությամբ շրջանակով, որի վրա կորաձև անգլերենով գրված է «ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA» գրառումը: Սկավառակը ներսի կողմից եզերված է 86մմ /±0,5մմ/ լայնությամբ շրջանակով, որի վրա կորաձև գրված է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը: Սկավառակի կենտրոնում տեղակայված է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը՝ 71մմ /±1մմ/ x 34,5մմ /±1մմ/ չափերով, որն ունի գլխավերևում կորաձև եզերված Հայաստանի Հանրապետության եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով և ներքևի մասում կապույտ գույնով էմալապատ ժապավենի վրա «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրվածքը: Խորհրդանիշի հետնամասը զարդարված է սրածայր համաչափ դետալներով հավաքված զարդանախշերով որպես համակարգված և սառնասիրտ աշխատանքի խորհուրդ: Սկավառակը պետք է ամրացված լինի համապատասխան հիմնամասի վրա, որը պետք է ունենա հետնամասում կաշվե ծալվող հենակ սեղանին դնելու համար: Հիմնամասի չափերը՝ 110մմ /±2մմ/ x 110մմ /±2մմ/, որը պետք է տեղադրված լինի տուփում:

		Հուշանվերը տեղադրված է համապատասխան տուփի մեջ, որը նախապես պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Տուփի մեջտեղում, համաչափ պետք է դաջված լինի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը։ Աշխատանքը սկսելուց առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱL-24/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	марка	технические характеристики
5		